Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիա

CSN

Հիշողության ուսումնասիրությունը և հիշողության ակտիվիզմը

Բարդ անցյալը և գաղութատիրությունը

Քաղաքային և հանրային տարածքները

Մշակութային իրավունքները

Քվիր մշակույթը և գենդերային ուսումնասիրությունները

Մշակութային և սոցիալական նարատիվները

Մեր հրապարակումները

Lab

Cultural and Social Narratives Laboratory

*CSN*

Մշակութային և սոցիալական
նարատիվների լաբորատորիա

*Lab*

Մեր լաբորատորիան ձգտում է դառնալ տարբեր լեզուների, մեթոդների ու գիտակարգերի խաչմերուկ: Մեզ համար հատկապես կարևոր են այն նախագծերը, որոնք միավորում են արվեստագետների, հետազոտողների, ակտիվիստների և այլոց: Այդ նախագծերի հիմնական նպատակը տարբեր միջոցներով հանրային հնչեղություն ունեցող պատումներին ու արդիական խնդիրներին անդրադառնալն է: Ինքներս մեզ, հասարակությանն ու սեփական մշակույթը գլոբալ համատեքստում քննելու համար մենք հետամուտ ենք համագործակցելու Արևելյան գործընկերության, Հարավային Կովկասի, Բալթյան, ինչպես նաև աշխարհի այլ տարածաշրջանների երկրները ներկայացնող

**կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Ամփոփ ասած՝ մեր գործը շարունակական երկխոսությունն է՝ լոկալ և գլոբալ երկխոսությունը:**

Մշակութային և սոցիալական
նարատիվների
լաբորատորիայի նախագահ՝
Տիգրան Ամիրյան

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մշակութային և սոցիալական
նարատիվների լաբորատորիա
*(8)*

Հիշողության ուսումնասիրությունը
և հիշողության ակտիվիզմը
*(14)*

Բարդ անցյալը և գաղութատիրությունը
*(20)*

Քաղաքային և հանրային տարածքները
*(24)*

Մշակութային իրավունքները
*(30)*

Քվիր մշակույթը և գենդերային
ուսումնասիրությունները
*(34)*

Մշակութային և սոցիալական
նարատիվները
*(38)*

Մեր հրապարակումները
*(42)*

Մեր Գործունեությունը
*(63)*

1

# Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիա

Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիայի գործունեության նպատակն է հանրության համար հնարավորություն ստեղծել՝ պատկերացում կազմելու արդի մշակութային և սոցիալական հարցերի մասին, ներգրավվելու դրանց շուրջ ծավալվող քննարկումներում և գործընթացներում: Լաբորատորիայի առաջնային խնդիրը մշակույթի և երկխոսության միջոցով հակամարտությունների վերլուծությունն ու փոխակերպումն է: Մենք ձգտում ենք հանրության համար հասանելի դարձնել արդի գիտահանրամատչելի գրականությունը, օժանդակել մարդկանց պաշտպանելու և իրացնելու իրենց մշակութային իրավունքները: Մենք հետամուտ ենք մշակութային դիսկուրսի

**ընդլայնմանը, մշակույթի միջոցով հանրության տարբեր խմբերին աջակցության ցուցաբերմանը և այդկերպ Հայաստանում և տարածաշրջանում ժողովրդավարության ամրապնդմանը:**

CSN Lab-ը մի խումբ մշակութային գործիչների, գիտնականների, հետազոտողների և արվեստագետների կողմից ստեղծված միջգիտակարգային հետազոտական հարթակ է, որը արդի և զգայուն թեմաներն ուսումնասիրում և ներկայացնում է տարատեսակ ձևաչափերով՝ նպաստելով հանրության տարբեր խմբերի ու համայնքների շրջանում այդ թեմաների վերաբերյալ խոսույթի ձևավորմանը:

# Լաբորատորիայի բոլոր նախագծերի հիմքում ընկած են ժողովրդավարության սկզբունքներն ու արժեքները:

Մենք հավատացած ենք, որ բաց ու թափանցիկ գործելաոճը, պարզ և հանրամատչելի լեզուն, տարբեր մեդիաձևաչափերի կիրառումը նպաստում են հումանիտար և հասարակագիտական հետազոտությունները մարդկանց համար առավել հասանելի և ազդեցիկ դարձնելուն: Ահա թե ինչու մեր նախագծերը մասնակցային են, իրականացվում են զանազան հետազոտական մեթոդներով և գործիքներով, ուղղված են անցյալը և ներկան առավել թափանցիկ
դարձնելուն:

Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիան ունի գործունեության մի շարք ուղղություններ:
Դրանցից են՝

- Հիշողության ուսումնասիրությունը և հիշողության ակտիվիզմը (memory activism)
- Մշակութային իրավունքները
- Նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգությունը
- Մշակույթն ու համակեցությունը
- Հանրային տարածքները և ուրբան ակտիվիզմը
- Շրջակա միջավայրը և մշակույթը
- Միգրացիան և դրա հետևանքները
- Բարդ անցյալի և գաղութատիրության ուսումնասիրությունը
- Քվիր մշակույթը և գենդերային հավասարությունը
- Երկխոսության հարթակների ստեղծումը

Գործունեության տարիների ընթացքում լաբորատորիան ինչպես Հայաստանում, այնպես էլ ամբողջ տարածաշրջանում իրականացրել է շուրջ երկու տասնյակ նախագծեր, որոնք ներկայացվել են տարաբնույթ ձևաչափերով, այդ թվում՝

- Միջգիտակարգային հետազոտական նախագծեր
- Գրքեր
- Թեմատիկ վեբ կայքեր
- Փոդքասթներ
- Ցուցահանդեսներ
- Երկխոսության ծրագրեր
- Վարպետության դասեր
- Ամառային և ձմեռային դպրոցներ
- Արտ-ռեզիդենցիայի ծրագրեր (artist residencies) և այլն:

Մեզ համար անչափ կարևոր է համագործակցությունը Հայաստանում և Հայաստանից դուրս գործող արվեստագետների, մշակույթի գործիչների, տեսաբանների, հետազոտողների, երիտասարդ փորձնականների, ինչպես նաև կազմակերպությունների հետ, որոնց ջանքերն ուղղված են փոփոխությունների և երկարաժամկետ արդյունքի հասնելուն:

Հենց համագործակցային և ներառական մոտեցումներն են հնարավոր դարձնում բարդ և զգայուն խնդիրների վերաբերյալ խորքային ուսումնասիրությունները:

2

# Հիշողության ուսումնասիրությունը և հիշողության ակտիվիզմը

Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիան կարևորում է հիշողության ուսումնասիրությունը, քանի որ հիշողությունը ինքնության հիմնարար և անբաժանելի մասն է:

Հիշողության ուսումնասիրությանն ուղղված նախագծերը վերհանում են հարկադրաբար մոռացված անցյալը, հնարավորություն ընձեռում հասկանալու մի շարք արդի հարցերի և խնդիրների պատճառահետևանքային կապերը, որոնք սովորաբար դուրս են մնում պաշտոնական պատմությունից և խոսույթից:

**Արդի ժամանակներում առավել հաճախ ենք ականատես լինում, թե ինչպես են բռնատիրական և հակաժողովրդավարական իշխանությունները (այդ թվում՝ մեր տարածաշրջանի երկրների) առաջին հերթին ոչնչացնում հիշողության ինստիտուտները, հրաժարվում իրենց պետության հանցավոր անցյալն ընդունելուց ու այդկերպ նախկինում կատարված հանցագործությունները չկրկնելուց: Հիշողության ուսումնասիրությամբ զբաղվելով մենք նպատակ ունենք նվազեցնել այդ ռիսկերը՝ սատարելով ժողովրդավարության ու թափանցիկ կառավարման օրակարգը:**

Հիշողության ուսումնասիրությանը և հիշողության ակտիվիզմին առնչվող ծրագրերի ուսումնասիրության առարկան են անհատական և կոլեկտիվ հիշողության նուրբ շերտերն ու դրսևորումները, խեղված ինքնություններն ու տրավմատիկ անցյալը, մոռացության հետևանքները և արդի խնդիրների պատմական արմատները:

Վերջին մի քանի տարիների ընթացքում մեզ հաջողվել է իրականացնել ծրագրեր, որոնք ընդլայնում և ապակենտրոնացնում են հիշողության ուսումնասիրությունների թեմատիկ շրջանակը, այն դուրս բերում ակադեմիական նեղ տիրույթից, ցույց տալիս հիշողության ազատության և հիշողության իրավունքի կարևորությունը, հիմք ծառայում հիշողությունը դիտարկելու այնպիսի երևույթների համատեքստում, ինչպիսիք են բարդ անցյալը, քաղաքային տարածքը, քվիր մշակույթը, համակեցությունը և այլն:

# Հիշողության նախագծերի միջոցով մենք նպաստում ենք հասարակության ինքնահայեցմանը, հիշողության բեկորների ի մի բերմանը, հիշողության իմաստավորմանն ու հանրահռչակմանը:

CSN Lab-ը հեղինակել է հիշողության ուսումնասիրությանը նվիրված մի շարք ծավալուն աշխատություններ: Դրանց թվում են.

- Երևանի վերնակուլյար ճարտարապետության եզակի նմուշները, մշակութային բազմաշերտությունն ու համակեցությունն ամփոփող պատմական Ֆիրդուս և Կոնդ թաղամասերի սոցիալական և տարածական հիշողության հետազոտությունը

- Երևանի կենտրոնում գտնվող, խորհրդային և հետխորհրդային ժամանակներում քաղաքային իշխանությունների կողմից բազմիցս ճնշված, քաղաքի ու հիշողության տարածությունից դուրս մղված, մասամբ բետոնով պատված Գետառ գետի հետազոտությունը

- Ստամբուլի Բալաթ թաղամասում հայերի, հրեաների, հույների և թուրքերի էթնիկ և մշակութային համակեցության ուսումնասիրությունը

- Հետխորհրդային Հայաստանում քվիր հիշողության միջգիտակարգային ուսումնասիրությունը

- Պատերազմների և հակամարտությունների հետևանքով բռնի տեղահանվածների հիշողության մեջ պահպանվող քաղաքային տարածքի պատումների ու մտաքարտեզների հավաքումն ու վերլուծությունը

- Խորհրդային տարիներին Թբիլիսիի քաղաքային տարածքում գտնվող տարբեր էթնիկ խմբերի հիշողության վայրերի ոչնչացումը և դրա ազդեցությունը քաղաքի ու քաղաքացիների ինքնության վրա:

Վերոնշյալ բոլոր նախագծերն իրականացվել են հիշողության և հետհիշողության տարբեր դրսևորումների ուսումնասիրությամբ՝ կիրառելով այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են բանավոր պատմությունների հավաքագրումն ու ուսումնասիրումը, տարածության նշանագիտական վերլուծությունը, ընտանեկան և պաշտոնական արխիվների հետ աշխատանքը, մտաքարտեզները, հիշողության և տարածության վիզուալացումը, ինչպես նաև անցյալի հետազոտման այլ գործիքների կիրառումը:

3

# Բարդ անցյալը և գաղութատիրությունը

Ելնելով Հայաստանում և տարածաշրջանում տիրող իրավիճակից և դրանից բխող հրատապ խնդիրներից՝ մենք շարունակաբար անդրադառնում ենք գաղութային անցյալին և դրա քաղաքական, մշակութային և սոցիալական ազդեցությանը: Մեր հետազոտությունները ցույց են տալիս, որ անկախության հռչակումից ոչ պակաս կարևորություն ունի գաղութային անցյալին գնահատականներ տալը, ինչպես նաև ժամանակակից նեոգաղութատիրական դրսևորումների սահմանումն ու ուսումնասիրումը:

Գաղութային անցյալի հետքերն ու հետևանքները մինչ օրս դրսևորվում են քաղաքականության, տնտեսության, լեզվամտածողության, ճարտարապետության, քաղաքաշինության, մշակույթի, բնապահպանության, ռեսուրսների կառավարման և նույնիսկ առօրեական պրակտիկաների մեջ: Այդուհանդերձ, դրանք չեն դառնում ներքին մտորումների, խորհրդածության, հանրային քննարկումների, հետազոտական աշխատանքների և քաղաքականությունների մշակման թեմա: Հետևաբար, հասարակության լայն շերտերը հնարավորություն չեն ունենում նկատելու անցյալի և ներկայի պատճառահետևանքային կապերը, հասկանալու մեր օրերին բնորոշ մի շարք խնդիրների արմատները, ձևավորելու լեզու և ստանալու հիմնական գիտելիք՝ անցյալը և ներկան վերլուծելու համար:

**Հայաստանում և տարածաշրջանում իրադրությունը բազմիցս խաթարվել է գաղութատիրական ճնշումների ազդեցությամբ: Առկա հակամարտությունների և հանրային տարաձայնությունների հիմքում հաճախ ընկած են գաղութային բարդ անցյալն ու դրա հետևանքները:**

(Նեո)գաղութատիրության թեման միջգիտակարգային տարբեր տեսանկյուններից ներկայացնելու, գաղութացնողի և գաղութացվողի միջև երկխոսության հարթակ ստեղծելու, հետազոտողների, արվեստագետների, մշակույթի գործիչների և մեդիաղորտի մասնագետների ուշադրությունը հրավիրելու և հանրային դիսկուրս ձևավորելու նպատակով Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիան իրականացրել է մի շարք նախագծեր: Մենք ցանկանում ենք հանրության համար հասանելի դարձնել գաղութատիրության մասին գիտելիքը, օգնել մարդկանց ձևավորել այս խնդիրներն արծարծելու լեզու, ստեղծել հնարավորություն վերանայելու սեփական ինքնությունը ու միջավայրը և օժտելու նրանց այդ ամենը պաշտպանելու կարողությամբ:

4

# Քաղաքային և հանրային տարածքները

Տարածաշրջանի բարդ անցյալն իր դրոշմն է թողել ոչ միայն մարդկանց, այլև քաղաքային և հանրային տարածքների հիշողության ու պատմության վրա: Քաղաքային փոխակերպումները զգալի ազդեցություն են ունեցել սոցիալական կառուցվածքների, ինչպես նաև բնակիչների և քաղաքացիների փոխհարաբերությունների վրա:

Ուսումնասիրելով քաղաքային և հանրային տարածքների ձևավորման և զարգացման գործընթացները՝ մենք հաճախ նկատում ենք, թե ինչպես է սովետական քաղաքաշինությունը անտեսել և խմբագրել նախախորհրդային շրջանի ճարտարապետական և ուրբանիստական ինքնությունները: Հետխորհրդային ժամանակներն իրենց հերթին նոր խնդիրներ են ի հայտ բերել՝ անուշադրության մատնված քաղաքաշինական և ճարտարապետական ժառանգություն, դեգրադացված հանրային տարածքներ և լքված արտադրական գոտիներ, անկանոն և ապօրինի կառուցապատում, կոռուպցիոն ռիսկեր պարունակող օրենսդրական կարգավորումներ և այլ խնդրահարույց հարցեր: Ստեղծված քաոսն ակնհայտ է դարձնում քաղաքի և քաղաքացու փոխհարաբերման անազատությունը և ընդգծում տարածությունը ոչ միայն ուրբանիստական, այլև մշակութաբանական և մարդաբանական դիտանկյուններից հետազոտելու անհրաժեշտությունը:

**Քաղաքը պատկանում է մարդկանց և պետք է իրացվի նրանց կողմից: Հանրային տարածքների հասանելիությունն ու ազատությունը խորհրդանշում են ժողովրդավարությունը, միջմարդկային հորիզոնական հարաբերությունները: Մեր նախագծերի նպատակն է մարդկանց համար ձևավորել ամուր հիմք և լեզու՝ քաղաքաշինական խնդիրների և սեփական մշակութային իրավունքների պաշտպանության մասին բարձրաձայնելու համար:**

Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիայի նախագծերի առանցքում են հատկապես քաղաքային տարածքի վերնակուլյար թաղամասերը և դրանց հիշողության պաշտպանությունը՝ որպես ժողովրդական ճարտարապետության և ժողովրդավարության դրսևորում: Մենք ցանկանում ենք վերհանել ու պաշտպանել քաղաքային և հանրային տարածքների նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգությունը, ընդգծել դրա կարևորությունը և ցույց տալ, որ այն իշխանությունների և բիզնեսի կողմից շարունակաբար ենթարկվում է տարատեսակ ճնշումների: Այս հրատապ խնդիրներին մենք անդրադառնում ենք տարբեր ձևաչափերով՝ ներգրավելով ճարտարապետների, ուրբանիստների, մշակույթի գործիչների, մեդիաոլորտի ներկայացուցիչների և այլ մասնագետների:

Քաղաքային միջավայրում ձևավորվում և արտացոլվում են ոչ միայն պատմությունը, ճարտարապետությունն ու կեցությունը, այլև քաղաքացիների ինքնությունը, ազատության ու բազմազանության սահմանները: Միջավայրի և հանրության փոխազդեցության արդյունքում տարածությունը վերածվում է մշակութային գործընթացների ինքնատիպ վավերագրության:

5

# Մշակութային իրավունքները

Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիան իր գործունեությամբ ցանկանում է նպաստել Հայաստանում մշակութային իրավունքների շուրջ լայն դիսկուրսի ձևավորմանը, քանի որ մշակութային իրավունքները պատկանում են ոչ միայն արվեստագետներին և ստեղծագործողներին, այլև՝ ողջ հանրությանը: Մեր նպատակը հեղինակների, արվեստագետների և ստեղծագործողների իրավունքների պաշտպանությունն է, ինչպես նաև մշակույթի, կրթության և գիտության հասանելիության ապահովման ջատագովությունը: Համագործակցելով մշակույթի գործիչների, ստեղծագործողների, քաղհասարակության, անկախ մեդիայի և այլ դերակատարների հետ՝ CSN Lab-ը ստեղծել և հրատարակել է թեմատիկ գրականություն, կազմակերպել դասախոսություններ, վարպետության դասեր, աշխատարաններ, քննարկումներ և այլ միջոցառումներ:

# Խթանելով մշակութային իրավունքների դիսկուրսի զարգացումը՝ մենք նպաստում ենք մարդու իրավունքների պաշտպանությանն ու ժողովրդավարության կայացմանը:

Մեր լաբորատորիան իր տարաբնույթ նախագծերում անդրադարձել է մշակութային իրավունքների պաշտպանությանն ու հանրահռչակմանն առնչվող մի շարք հարցերի: Մեզ հաջողվել է հանրային քննարկումների դաշտ բերել և օրակարգային դարձնել ոչ միայն միջազգայնորեն ընդունված մշակութային իրավունքներին վերաբերող հիմնահարցերը, այլև Հայաստանին և մեր տարածաշրջանին բնորոշ այնպիսի հրատապ հարցեր, ինչպիսիք են քաղաքի վերնակույլար թաղամասերի պաշտպանությունը, նյութական և ոչ նյութական ժառանգության պահպանումը, մշակութային կյանքին մասնակցելու հավասար հնարավորությունները, մշակութային կայունությունը, արվեստագետի ազատությունը, նեոգաղութատիրական քաղաքականության դրսևորումները, գենդերային խտրականությունը, քվիր մշակույթը և այլն:

6

# Քվիր մշակույթը և գենդերային ուսումնասիրությունները

Գենդերային ինքնությանը և քվիր մշակույթին առնչվող թեմաները շարունակում են արդիական և անչափ զգայուն լինել թե՛ Հայաստանում, թե՛ ամբողջ տարածաշրջանում: Այդուհանդերձ, դրանք հաճախ անտեսվում և այդպես էլ չեն դառնում հանրային և քաղաքական օրակարգերի մաս: Մեր լաբորատորիան հետաքրքրված է այս թեմաները մշակութային իրավունքների համատեքստում հետազոտելով, ինչպես նաև քվիր արվեստագետներին աջակցելով:

Տարբեր ծրագրերի շրջանակներում CSN Lab-ը ուսումնասիրել է պետական և ոչ պետական մշակութային կառույցների զգայունությունը գենդերային հարցերի շուրջ, գնահատել նրանց ներգրավվածությունը այդ կառույցների կողմից քաղաքականության մշակման գործընթացներում, հետազոտել մշակութային կառույցների աշխատանքի գենդերային ասպեկտները: Մենք փորձել ենք հասկանալ, թե ինչ դեր և ներգրավվածություն ունեն Հայաստանում ստեղծագործող կին մշակութային գործիչներն ու արվեստագետները, թե որքան պատրաստակամ են մշակութային կառույցները համագործակցել ԼԳԲՏԻՔ+ արվեստագետների հետ և ցուցադրել կամ ներկայացնել նրանց ստեղծած արվեստը և մշակույթը:

CSN Lab-ի ծրագրերը ներառում են ոչ միայն Հայաստանը, այլև՝ տարածաշրջանի այլ երկրներ: Մենք ջանում ենք մշակութային երկխոսություն հաստատել և համագործակցել հարևան երկրների մշակութային գործիչների և կազմակերպությունների հետ: Այդօրինակ նախագծերից է հայ և վրացի կին արվեստագետների երկխոսության ծրագիրը, որի շրջանակներում մասնակիցները փորձի փոխանակման այցերի ընթացքում ներկայացնում են իրենց ստեղծագործությունները, կիսվում փորձառությամբ և մոտեցումներով:

**Քվիր ինքնության և գենդերային հավասարության համատեքստում նշանակալի է Հայաստանում քվիր հիշողության վերաբերյալ մեր հետազոտական նախագիծը, որը նման բազմաշերտ և բարդ երևույթի վերլուծության առաջին փորձն է ոչ միայն մեր երկրում, այլև մեր տարածաշրջանում: Այս անչափ զգայուն թեմայի ուսումնասիրությունը քվիր ինքնության և մշակույթի առավել ընդգրկուն և բազմակողմանի հետազոտության հիմք է:**

Գենդերային ինքնության և քվիր մշակույթի վերաբերյալ ուսումնասիրությունները օգտակար և կիրառելի են ոչ միայն մեր լաբորատորիայի, այլև առհասարակ երկրում գործող մշակութային կազմակերպությունների համար:

Կատարված հետազոտությունները կարող են նաև հիմք հանդիսանալ պետական և ոչ պետական մշակութային կառույցների, որոշումներ կայացնող մարմինների և կազմակերպությունների համար մշակութային դաշտում բարեփոխումների և Հայաստանի՝ դեռևս մեծապես հայրիշխանական հասարակությունում գենդերային հավասարության խնդիրների լուծման գործում:

7

# Մշակութային և սոցիալական նարատիվները

CSN Lab-ի աշխատանքը ծավալվում է ներքին ու արտաքին, ակներև կամ աննկատ կոնֆլիկտների շուրջ: Դրանք երբեմն աննշմարելի, բայց գործուն են մեր հիշողության և հետհիշողության, պատմության և բարդ անցյալի, մեր և մեզ շրջապատող մարդկանց բազմապիսի ինքնությունների հետ հաղորդակցության, մեր իրավունքների իրացման, առօրեական կյանքի և այլ տիրույթներում:

Թեև մեր գործունեության հիմնական ուղղություններն են հիշողության ուսումնասիրությունը, մշակութային իրավունքները, քաղաքային և հանրային տարածքները, գենդերային հավասարությունը և այլն, մենք մշտապես անդրադառնում ենք նաև ճգնաժամային իրավիճակներում ի հայտ եկող նարատիվներին, ինչպիսիք ենք կորոնավիրուսային համավարակի շուրջ մեդիա նարատիվների և լեզվի ձևավորման հարցերը, զանազան դավադրության տեսությունները և այլն:

Լաբորատորիայի իրականացրած ծրագրերը նպատակ են ունեցել շոշափել հարցեր և թեմաներ, որոնց ոչ միայն բարձրաձայնումն ու հանրահռչակումը, այլև նույնիսկ դրանց մասին մտածելն ու ներքին զրույցներն են դժվարությամբ տրվում մարդկանց և համայնքներին: CSN Lab-ը ջանացել է ցանկացած նոր թեմա և մոտեցում վերհանելուն զուգահեռ ձևավորել դրանց շուրջ խոսույթ՝ որպես սկզբնակետ և հենասյուն հանրության բոլոր խմբերի համար:

Հետևելով ժողովրդավարական արժեքներին և ներառականության սկզբունքներին՝ մեր բոլոր նախագծերի առանցքային մասն են եղել հասարակության տարբեր շերտեր՝ գիտնականներ, արվեստագետներ, ակտիվիստներ, մեդիաոլորտի ներկայացուցիչներ, մշակույթի գործիչներ և ընդհանուր առմամբ քաղաքացիական հասարակություն: Ծրագրերի մշակման և իրականացման բոլոր փուլերում մեր կազմակերպությունը առաջնահերթություն է տալիս ոչ միայն կանանց և գենդերային ոչ հետերոնորմատիվ ինքնություններ ունեցող մարդկանց, այլև՝ իրենց քաղաքական հայացքների պատճառով ճնշումների և հետապնդումների ենթարկվող, հակամարտության/պատերազմական գոտիներում բնակվող մարդկանց, փախստականներին, բռնի տեղահանվածներին և այլոց, որոնց փորձի և համագործակցության պատրաստակամության

շնորհիվ մեր նախագծերը դառնում են առավել ընդգրկուն և բազմակողմանի: Այսպիսով մեր ծրագրերն ընդգծում են, որ մշակույթն ու արվեստն ուղղակիորեն կապված են ժողովրդավարական արժեքների պաշտպանության և հանրահռչակման հետ:

Մեր աշխատանքը նպաստել է տարատեսակ արդիական թեմաների շուրջ դիսկուրսի ձևավորմանն ու զարգացմանը, բազմաբնույթ կոնֆլիկտների համատեքստում երկխոսության կազմավորմանը, գիտակարգային հարցերի շուրջ հանրամատչելի լեզվի, գործիքների ու մոտեցումների ստեղծմանը:

Մեզ համար ոգևորիչ է մեր նախագծերի հանդեպ տեղական և միջազգային մեդիայի ուշադրությունը, համագործակցությունը օտարերկրյա արվեստագետների, մշակութային գործիչների, ակտիվիստների և կազմակերպությունների հետ: Առավել քաջալերող է մեր ծրագրերի միջոցով Հայաստանում և տարածաշրջանում քաղաքացիական հասարակության զարգացումը խթանելը:

Մենք շարունակում ենք մեր աշխատանքը՝ բացահայտելով մշակութային և սոցիալական հարցերի միահյուսվածությունը, ծրագրելով միջգիտակարգային հետազոտությունների միջոցով ընդլայնել մշակութային դիսկուրսը և հումանիտար գիտության տիրույթը, զարգացնել ժամանակակից արվեստի դաշտը, ստեղծել ակտիվիզմի նոր լեզու և մեթոդներ, ձևավորել երկխոսություն հանրության տարբեր խմբերի միջև ու այդպիսով Հայաստանում և տարածաշրջանում ամրապնդել ժողովրդավարության հիմքերը:

8

# Մեր հրապարակումները

**Ֆիրդուս. տեղի հիշողությունը**
Խմբ.՝ Ամիրյան Տ., Բալանթարյան Ս.
CSN lab, Երևան, 2019:

FIRDUS: THE MEMORY OF A PLACE
ՖԻՐԴՈՒՍ. ՏԵՂԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ


FIRDUS: THE MEMORY OF A PLACE
ՖԻՐԴՈՒՍ. ՏԵՂԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ

**Շուշի. մտաքարտեզներ**
Խմբ.՝ Կարապետյան Է., Ամիրյան Տ.
CSN Lab, Երևան, 2021:

Shushi:
Mental Maps
ԱՇՈՒՇ.
ԱՌՈՒՆԵՐՈՒՄ

**Հայաստանում մշակութային դաշտի գենդերային վերլուծություն**
Խմբ.՝ Քալանթարյան Ս., Ամիրյան Տ.
CSN Lab, Երևան, 2022:

Methodology and Structure of the Analysis (3)

Background (3)

Timeframe (5)

Scope of the Cultural Space (8)

The Legal Framework of Gender and Cultural Field Regulations in Armenia (11)

Public Perceptions of the Laws on the Gender Equality (14)

The Gender Discourse in the Non-Governmental Cultural Sphere in Armenia (16)

Conclusion (24)

General Recommendations (27)

Methodology and Structure of the Analysis

This report is one of the first attempts to understand and estimate the environment on gender policy in the contemporary cultural field of Armenia. In the analysis, we used the results of a qualitative study while incorporating some elements of a quantitative survey. The gender analysis aims to identify trends and fundamental issues of gender equality, women's role and engagement, the rights and freedom of expression of the LGBTQ+ community in the cultural space of Armenia within the period of 2016-2021. In the analysis, the first part refers to the legal framework of the topic and the public and media perceptions on the changes in state gender policy in the cultural field or the introductions of the new ones. The second part of the analysis presents a desk study of the activities and local phenomena that work towards the actualization and dissemination of the discourse on gender equality in the modern cultural space.

Background

Over the past two decades, several non-governmental organizations in Armenia have been actively working towards the democratization of various spheres while advocating for and introducing a discourse on gender equality, women's engagement, and the protection of LGBTQ + community rights. It is worth mentioning the constant and efficient work of Pink Armenia[1], Women's Resource Center[2], the Coalition to Stop Violence Against Women[3], and

1 See periodic reports on the violation of the rights and freedoms of LGBTQ+ community in Armenia. Pink Armenia. https://www.pinkarmenia.org/en/publications/reports/

2 One of the rare attempts to research and analyze the situation of women engagement, gender discrimination, etc. is carried out by this organization. Reports and studies are available on the website. Women's Resource Center. https://www.wrc.am/en/publications-research/

3 See "Challenges And Gaps In Armenia's Response to Domestic Violence against Women and Girls" Report by the Coalition to Stop Violence against Women. Yerevan, 2020. https://www.ecoi.net/en/file/local/1500126/download?mirror=ch&hash=3d0d7b3d0f7b0f8f0f7f0f0f0

GENDER ANALYSIS OF THE CULTURAL FIELD IN ARMENIA
Prepared by CSN Lab
CULTURAL & SOCIAL NARRATIVES LABORATORY
NEW DEMOCRACY FOUND

**Մշակութային իրավունքներ**
Փորսդամ Հ., Ռեհթով Օ.
Թարգմ. անգլերենից Մ. Եղիազարյանի
CSN Lab, Երևան, 2022:

ՍՈՍԿՈՒԹԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ
DANISH
CULTURAL
INSTITUTE
NEW
DEMOCRACY
FUND
CULTURAL
& SOCIAL
NARRATIVES
LABORATORY

**Բալաթ. ապրել միասին**
Խմբ.՝ Ամիրյան Տ.,
Քալանթարյան Ս., Կոյզը Գ.
CSN Lab, Երևան, 2023:
ISBN 978-9939-1-1500-9

Էմրե Կոյզը
**The Streets of Balat are a Fish-Grid**

Բալատ է Բեն Խանգիլանում Էմրե Կոյզը, 2017, Գրաֆիտի, Սեփական հավաքածու։ Բալատ է Բեն Խանգիլանում Էմրե Կոյզը, 2017, Գրաֆիտի, Սեփական հավաքածու։

**Figure 2.** A View From Balat Neighborhood, 2017, Graffiti, Emmere Koyuncu Collection, 1989.
Balat is Ben Hangilan Emre Koyuncu, 2017, Graffiti, Emmere Koyuncu Collection, 1989.

Բեն Խանգիլանում Էմրե Կոյզը
**Balat Kasabası Balık İçgörü**

Բալատ՝ Բեն Խանգիլանում Էմրե Կոյզը, 2017, Գրաֆիտի, Սեփական հավաքածու։ Բալատ է Բեն Խանգիլանում Էմրե Կոյզը, 2017, Գրաֆիտի, Սեփական հավաքածու։

Բալատ՝

# ԲԱԼԱԹ.

ԱՊՐԵԼ ՄԻԱՍԻՆ

**Գետառ. գետի հիշողությունը**
Խմբ.՝ Ամիրյան Տ., Գալստյան Հ.
CSN Lab, Երևան, 2023:

Getar

memory of a river

Գետառ

գետի հիշողությունը

**Քվիր հիշողությունը Հայաստանում**
Խմբ.՝ Եղիազարյան Մ., Աբրահամյան Ա., Ամիրյան Տ.
CSN Lab, Երևան, 2023:

Queer
Memory
in Armenia

Քվիր
հիշողությունը
Հայաստանում

Queer
Memory
in Armenia

Քվիր
հիշողությունը
Հայաստանում

**ZINEադարար #1 Ժենգալով հաց**
Խմբ.՝ Թևանյան Շ., Աբրահամյան Ա.
CSN Lab, Երևան, 2023:


ZINEшդшդшр
#1

**ZINEաղադար #2 Օրագրեր**
Խմբ.՝ Թևանյան Շ., Եղիազարյան Մ., Աբրահամյան Ա.
CSN Lab, Երևան, 2023:

բնորոշ լեզվական կարողությունը՝ նկարագրելու այն, ինչ դրսից է մտնում մոնոսմենտալ պատռվածքի և պատմական ոլորտներից։ Ընտրե է խոսել կանանց գրի մասին՝ հանկարծակի պատմությունն ու հիշողությունը։ Հիշողությունը որպես քաղաքական նարատիվներ, այլ հանկարծակի է առօրեական սարքումների մեջ ընկղմված իրականության դրվագները։ Պատռվածքի շրջը կանանց կոմունիզացիան, պատում-հիշողությունը կամ պատերազմի և հետպատերազմյան շրջանի փաստագրումը, որը նանդող դարում դարձել է զգայականության արմատապես նոր տեսան, շարունակում է պոլիսական մնալ միևնույն պես։ Անձնական օրագրերը, վավերագրական արձանագրությունները լեզվերը և կանանց ինքնագրերը դարձել են պատերազմի իրական պատկերը հասկանալու հազվագյուտ միջոցներից մեկը։ Իրականությունը գտնելու բանալին ոչ թե լրագրության կարծրատիպացումը, պատերազմի մասին պրակտիկ էպոսի պատմականացումն ու հերոսացումն է, այլ՝ պատերազմի ու ռազմական տարածության բուն փորձառությանը առանձնացնելու մոտ հիշողության գիրը։

Երկրորդ հանգիպարիսին պատերազմից մինչև Կարմիրյան պատերազմը, [redacted] պատերազմից մինչև Ռուսաստանի դեմ ռուսական վերջին պատերազմը, 1980-ականների վերջից մինչև մեր օրեր ձգվող դարաշրջան հանձնարարությունը նոր նկարագրությունը կարող էջերից են։ Գրեթե բոլոր այս աղբյուրներն ունեն վավերագրության և ինքնակենսագրության մի քանի տեսակներ՝ մեղիա պատում, քաղաքական փաստագրումը, պատմական վավերագրությունը և անձնական գիրը, մասնավորապես՝ կանանց օրագրերը։ Գրավոր պատմության գրքերի բոլոր այս տեսակները եթակա են կերծման և պրոն խզ


ZINEաղաղար
#2

**ZINEաղպաղ #3 Անհանգիստ ճամպրուկ**
Խմբ.՝ Թևանյան Շ., Աբրահամյան Ա.
CSN Lab, Երևան, 2023:

# ZINEшդшդшр

#3

# 9

# Մեր Գործունեությունը

S
C
N
lab
CULTURAL
& SOCIAL
NARRATIVES
LABORATORY
ՀԲԸՄ

A flood in the Podestà on county square
(Alluvione del Duomo Arezzo) signed,
1966.
Gouache, Pen/Ink on Photographic
Paper, 20.5 x 14.5 cm, Fonds Lucio Fontana
Inventaire ID: 1012 P

CULTURAL
& SOCIAL
NARRATIVES
LABORATORY

Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիայի գործունեության նպատակն է հանրության համար հնարավորություն ստեղծել՝ պատկերացում կազմելու արդի մշակութային և սոցիալական հարցերի մասին, ներգրավվելու դրանց շուրջ ծավալվող քննարկումներում և գործընթացներում: Լաբորատորիայի առաջնային խնդիրը մշակույթի և երկխոսության միջոցով հակամարտությունների վերլուծությունն ու փոխակերպումն է: Մենք ձգտում ենք հանրության համար հասանելի դարձնել արդի գիտահանրամատչելի գրականությունը, օժանդակել մարդկանց պաշտպանելու և իրացնելու իրենց մշակութային իրավունքները: Մենք հետամուտ ենք մշակութային դիսկուրսի ընդլայնմանը, մշակույթի միջոցով հանրության տարբեր խմբերին աջակցության ցուցաբերմանը և այդկերպ Հայաստանում և տարածաշրջանում ժողովրդավարության ամրապնդմանը:

CULTURAL
& SOCIAL
NARRATIVES
LABORATORY